ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՍԻԴՈՅՆԵՐ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 63-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով «Սիդոյներ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը վերսկսելու մասին առաջարկությունը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 8-ի ՍԴԱՈ-22 աշխատակարգային որոշմամբ «Սիդոյներ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցվել է՝ մինչև կասեցման հիմքերը վերանալը:

Սահմանադրական դատարանը ստացել է վերոհիշյալ գործով պահանջված ապացույցները և դրանց ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ «Սիդոյներ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնելու հիմքերը վերացել են:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. «Սիդոյներ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը վերսկսել:

2. Սույն գործով դատաքննությունը նշանակել 2022 թվականի հունիսի 14-ին՝ ժամը 11.00-ին:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

7 հունիսի 2022 թվականի
ՍԴԱՈ-104